«Ստեփանավանի պրոֆ. Ա.Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ

«Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ –ը հայտարարում է մրցույթ մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար

Թափուր տեղերի անվանումը՝

Մաթեմատիկա (1 դրույք)
Ինֆորմատիկա (1,5 դրույք)
Կենսաբանություն (1 դրույք)
Ֆիզիկա (0,5 դրույք)
Հաշվապահական հաշվառման առարկաների (1 դրույք)
Հայոց լեզու (0,5 դրույք)
Տեխնիկական առարկաների «Գյուղատնտեսության մեքենայացում» (1 դրույք)
«Փոխադրումների կազմակերպում և կառավարում ավտոտրանսպորտում» (1 դրույք)

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝
1)հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին
2)մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին՝ տվյալ դեպքում ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվում:Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Դասախոսի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը և աշխատանքային ծանրաբեռնվածությունը որոշվում է ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 24.12.2020թ թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի:
Մրցույթին մասնակցելու համար անձը քոլեջ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում (Ձև 1)

2. Բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթության մասին հավաստող փաստաթուղթ՝ ((դիպլոմ) բնօրինակը և պատճենը)

2.1 Միջին մասնագիտական կրթության դեպքում՝ պարտադիր 4 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ

3. Անձնագիր (բնօրինակը և պատճենը)
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Զև 4)
6. Մեկ լուսանկար (3x4)
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ՝ բացառությամբ ՀՀ-ի համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների
8. ՀՀ-ի արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը)
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի սեպտեմբերի 22-ից հոկտեմբերի 05-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00 –ից 18:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի հոկտեմբերի 08 -ին, ժամը՝ 16:00 -ին Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջում:

Հասցեն՝ ք.Ստեփանավան, Երիտասարդական 47
Հեռ. 0256 2 22 80